



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Վ Ե Ն Ե Ր Ա Կ Ա Ն  
Ա Խ Տ Ե Ր

616.9

F-91

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՄՈՍԿՎԱ

1926

3-я Типография Госиздата С. С. Р. Армении.  
Москва, Армянский пер. 2.

90 JUL 2010

616.9

F-94

ing.

№ ԱՐՈՂՋՍՊԱՀԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ 1

Վ. ԲՐՈՆՆԵՐ

В. БРОННЕР  
ВЕНЕРИЧЕСК. БОЛЕЗНИ

на армянск. яз.

Վ Ե Ն Ե Ր Ա Կ Ա Ն  
Ա Խ Տ Ե Ր

1007  
33712

Թուս.-ից թարգ. բժ. Ա. ՄելիքՅԱՆ

XXXXXXXXXXXX

Центральное Издательство Народов Союза С. С. Р.

Москва, Никольская, 10

ՍԽՅՍ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ

ՄՈՍԿՎԱ

1926



06.03.2013

Книга набрана и отпечатана в 3-й  
типографии Госиздата С. С. Р. Арме-  
нии. Москва, Армянский пер., 2.  
В количестве 4000 экземпляров.  
Главлит № 49942.

ԻՆՉՊԵՍ Ե ՄԱՐԴ ՀԻՎԱՆԴԱՆՈՒՄ ՎԱՐԱԿԻՉ  
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

Մարդու համար ամենաթանկագին բանը  
առողջութիւնն է: Թեև մենք բոլորս էլ այդ-  
պէս ասում ենք, բայց մարդ չի գնահատում իր  
առողջութիւնը և շատ քիչ է մտածում զրա  
մասին: Այդպէս է արդյոք: Որինակի համար՝  
հարցրեք փոքե՛հ հիվանդի, թե նա ի՞նչու իրեն  
չպաշտպանեց, և դուք միշտ հետևյալ պատաս-  
խանք կստանաք. «Մի՛թե յես զիտեյի, վոր կա-  
րող յեմ հիվանդանալ զրանից. յե՛թե իմանայի,  
իհարկե՛ կպաշտպանվեյի. շե՛ վոր առողջու-  
թիւնն ինձ համար ամեն բանից թանկ է»: Յեզ  
անա բանից դուրս է գալիս, վոր մարդիկ հի-  
վանդանում են վոչ թե այն պատճառով, վոր  
չզիտեն գնահատել իրենց առողջութիւնն,  
այլ այն պատճառով, վոր չզիտեն պահպանել  
իրենց առողջութիւնը:

Տարբեր հիվանդութիւններ շատ կան և  
նրանցից պաշտպանվելու համար պէտք է իմա-  
նալ, թե ինչից վոր տեսակի հիվանդութիւն է



առաջ գալիս և ինչպէս ե նա փոխանցվում մար-  
դուն: Այս բոլորը վերաբերից կարող եր իմանալ  
ժողովուրդը: Տարական կառավարութիւնը քիչ  
եր մտածում ժողովրդի առողջութեան մասին  
և ավելի քիչ՝ նրա լուսավորութեան մասին:

Զե՞ վոր հեշտ ե ստրկութեան մեջ պահել  
խավար ժողովուրդը: Բայց ահա ստրկութեան  
վերջն հասավ. ժողովուրդը վերջ գրեց ցարա-  
կան կառավարութեան, վերջ գրեց և կապիտա-  
լիստական կարգերին, ժողովուրդն իր ձեռքն ա-  
ռավ իշխանութիւնը և դրա հետ միասին իր  
վրա վերցրեց իր բոլոր հոգսերը, նաև իր առող-  
ջութեան հոգսը:

Ժողովրդական առողջապահութիւնը ժողո-  
վրդի իրեն գործը դարձավ, և բանվորա-գյուղա-  
ցիական կառավարութիւնը, գիտակցելով, վոր  
ժողովրդի առողջացման ուղին նրա լուսավորու-  
թիւնն ե, սկսեց ժողովրդին ծանոթացնել, թե  
նա ի՞նչպէս պիտի պահպանի իր առողջութիւնը:  
Քաղաքներում և գյուղերում կազմակերպվում  
են ցուցահանդեսներ, ընթերցանութիւններ,  
դրույցներ, դանազան հիվանդութիւնների մա-  
սին տարածվում են միլիոնավոր թերթիկներ և  
գրքուկներ:

Ահա այս գրքուկի մեջ պատմված ե ժողո-  
վրդական մի մեծ պատուհասի մասին—վեներ-

րական հիվանդութիւնների մասին: Այստեղ  
պատմված ե, թե ի՞նչ են վեներական ախտերը,  
ի՞նչպէս են նրանք տարածվում, ի՞նչ վնասներ  
են նրանք հասցնում և ի՞նչպէս կարելի յե կովել  
նրանց զեմ:

Վեներական ախտերը վարակիչ են կոչվում  
այն պատճառով, վոր նրանք հիվանդից անց-  
նում են առողջին: Վորպեսզի լավ հասկանալ,  
թե ի՞նչպէս ե վեներական հիվանդութիւնների  
վարակը փոխանցվում և թե ի՞նչպէս կարելի յե  
այդ վարակից պաշտպանվել, անհրաժեշտ ե  
նախ պարզել, թե ի՞նչ տեսակ վարակիչ հիվան-  
դութիւններ կան և ի՞նչպէս ե մարդ այդ հի-  
վանդութիւններով տկարանում:

Կա մի տեսակ գործիք, վորը խոշորացնում  
ե ամեն բան և դրա համար ել կոչվում ե  
խնչորացույց կամ մանրազրիտակ:

Յեթե մանրազրիտակով նայենք մանր առար-  
կաներ, նրանք կմեծանան հազար և ել ավելի  
անգամ: Յեթե վերցնենք հում ջրի մի կաթիլը,  
գնենք ապակու վրա և նայենք մանրազրիտակով,  
մենք նրա մեջ կտեսնենք, վոր մի կաթիլ ջրի  
մեջ կան մեծ քանակութեամբ զանազան ձևի փոք-  
րիկ կենդանիներ—կամ գնդաձև, կամ խաշխաշի  
հատիկի պես, կամ ուղիղ ցուպիկի պես, կամ  
կիսացուպիկի պես. կան և ուրիշ տեսակ ձևերի:



Այդ կենդանիներից շատերը շարժվում են: Այդ մանր կենդանիները, վորոնց հասարակ աչքով չենք կարող տեսնել, կոչվում են մանրեներ: Այդ մանրեներն ապրում են և աճում վոչ միայն ջրի մեջ, այլ և հողի մեջ, ողի մեջ, նրանք ապրում են մարդու մարմնի մեջ, ամեն տեսակ կենդանու և միջատի մեջ:

Բյուրավոր տեսակի մանրեներ կան: Գրանց մի մասը վոչ մի վլաս չի տալիս մարդուն. կան և այնպիսիները, վորոնք ոգուտ են տալիս, բայց կան և այնպիսաները, վորոնք վլաս են տալիս, հիվանդություն են առաջ բերում: Յեւ վայն մանրեները, վորոնք մարդուն հիվանդացնում են, կոչվում են վարակիչ մանրեներ կամ, ինչպես ժողովուրդն է ասում, վարակ: Որինակի համար վերցնենք ջուրը. նրա մեջ մենք շատ տեսակ մանրեներ ենք տեսնում մանդրադիտակով, դրանց մեծ մասը վոչ մի վլաս չի տալիս մարդուն. բայց յերբեմն ջրի մեջ լինում է կարճ ցուպիկի պես մանրե և կոչվում է տիֆի ցուպիկ:

Յերբ մարդ խմում է այն ջրից, վորի մեջ կան ցուպիկ-մանրեներ, այդ ցուպիկներն ընկնում են մարդու ստամոքսը, վորից հետո անցնում են նաև աղիքներն. այդ ցուպիկները բազմանում են աղիքների մեջ, վորից հետո մարդ ծանր հեվան-

դանում է—վորովայնի ախֆ է ասանում: Ջրի մեջ կան և խոլերայի մանրեներ: Յեթե պրանք ընկնեն մարդու աղիքների մեջ և բազմանան, մարդ կհիվանդանա խոլերայով:

Մարդ ուրիշ վարակիչ հիվանդություններ ևս կարող է ստանալ՝ յեթե նրա մարմնի մեջ կամ, ինչպես ասում են, նրա կազմվածքի մեջ ընկնեն այս կամ այն հիվանդության միկրոբները՝ մանրեները:

Աշխարհումս վարակիչ հիվանդություններ շատ կան և նրանցից յուրաքանչյուրը ունի իր մանրեն: Վարակիչ մանրեն կարող է ընկնել մարդու կազմվածքի մեջ վո՛չ միայն ջրի հետ: Ուրինակի համար վերցնենք պալարախտը, կամ ինչպես ուրիշ կերպ են անվանում՝ թոքախտը: Այս հիվանդությունն առանձնապես վլասում է մարդու թոքը և առաջ է դալիս մի առանձին մանրեյից, վորը պալարախտի ցուպիկ է կոչվում: Թոքախտով հիվանդի խորխի մեջ այդ մանրեներից կան հարյուր հազարներ և միլիոններ: Թոքախտավորը թքում է հասակին, թուքը չորանում է, պալարախտի ցուպիկները մնում են հատակի վրա: Բավական է մաքրել սենյակը, վոր այդ մանրեները փոշու հետ բարձրանան ուղի: Այդ սենյակում մի ուրիշ տղրող շնչելիս ողի հետ ներս է շնչելու և պալարախտի ցուպիկները:



Առողջ մարդու թոքի մեջ այս ձևով են ընկնում պալարախտի ցուպիկները, վորոնք սկսում են բազմանալ, քայքայել թոքը և այն ժամանակ մարդ հիվանդանում է թոքախտով:

Կնշանակի, մարդ հիվանդանում է թոքախտով ողի միջոցով: Ուրիշ հիվանդություններով ել կարելի չե վարակվել դարձյալ ողի միջոցով, որինակ՝ կարմրուկով, քութեշով, բկուռուցքով: Կան և այնպիսի վարակիչ հիվանդություններ, վորոնք անցնում են հիվանդից առողջին միջատների միջոցով: Որինակ՝ վոշիլը կարող է փոխանցել մարդուն բժավոր տիֆի վարակը: Բժավոր տիֆով հիվանդի արյան մեջ շատ կան բժավոր տիֆի մանրէներ: Վոշիլը ծծում է հիվանդի արյան հետ միասին և մանրէներին: Այդ վոշիլն անցնում է ուրիշ առողջ մարդու, կծում է նրան և նրա արյան մեջ մտցնում բժավոր տիֆի վարակը: Բժավոր տիֆի վարակիչ մանրէները սկսում են բազմանալ արյան մեջ և մարդ հիվանդանում է բժավոր տիֆով: Կա և մի հիվանդություն, ընդմիջվող տենդ, կամ ինչպես կոչում են՝ ճահճային տենդ, վորը տարածված է վո՛չ ամենուրեք, այլ միայն ճահճոտ տեղերում: Սա մեր դողերոցքն է, և անցնում է հիվանդից առողջին մոծակների միջոցով: Կան և վարակիչ հիվանդություններ, վորոնք անցնում են մարդուն կեն-

դանիներից, որինակ՝ սիրիբախար, չրգոդությունը և այն:

Ամեն կողմից մարդուն շրջապատում են նրա թշնամիները, վարակիչ հիվանդությունների մանրէները: Դրանք հենց սպասում են, վոր մարդ սխալվի, վորպեսզի իրենք կարողանան մտնել նրա կազմվածքի մեջ և վորևե վարակիչ հիվանդություն առաջ բերեն:

Մարդու այս թշնամիներն ապրում են ջրի մեջ, ողի մեջ, միջատի և կենդանու մարմնի մեջ և հասարակ աչքով անտեսանելի յեն: Բայց կան և վարակիչ մանրէներ, վորոնք ապրում են միայն մարդու կազմվածքի մեջ: Այդ մանրէներն ընկնում են ողի մեջ հիվանդի թքի, թարախի կամ արյան միջոցով. նրանք քանի չեն չորացել, վտանգավոր են. բայց հենց վոր չորացան, այդ մանրէները վո՛հչանում են ու ավտանդ դառնում: Ողի մեջ, ջրի մեջ, փոշու մեջ այդ մանրէներն ապրել չեն կարող: Այս հատկությունն ունեն այն մանրէները, վորոնք առաջացնում են վեներական ախտեր: Ապա ուրեմն յուրաքանչյուր մարդ պետք է հասկանա, վոր ջրի միջոցով չի կարելի վարակվել վեներական ախտով, ողի միջոցով նույնպես չի կարելի վարակվել վեներական ախտով. այս հիվանդությունները չեն փոխանցվում ա-



առողջին միջատներէ կամ կենդանիներէ միջոցով: Առողջ մարդը վեներական ախտով կարող է հիվանդանալ միայն հիվանդի հետ մոտ շփումն ունենալով կամ այնպիսի առարկաներէ միջոցով, վորոնց վրա յեն ընկել հիվանդի դեռ չչորացած թարախը, թուքը կամ արյունը: Յերեք տեսակ վեներական ախտ կա. սիֆիլիս, սուսանակ (տրիպեր) և փափուկ շանկր: Վեներական այս յերեք ախտերից յուրաքանչյուրն առաջ և զալիս հատուկ վարակիչ մանրեայից և ուրեմն, հասկանալի յե, վոր յեթե մեկը վարակվել է մի վեներական ախտով, այդ ախտը չի կարող փոխվել մյուս վեներականի:

Մենք պարզեցինք, թե ինչպես են անցնում մարդուն վարակիչ հիվանդութունները, ի թիվս վորոնց և վեներական ախտերը. այժմ ծանոթանանք վեներական յուրաքանչյուր ախտին առանձին-առանձին:

### Ս ի Ֆ ի լ ի Ս

Սիֆիլիսը շատ տարածված հիվանդություն է.

Ռուսաստանում կան ամբողջ գյուղեր, վորոնց ազգաբնակչութունը գլխովին հիվանդ է սիֆիլիսով: Մենք բոլորս ել գիտենք, վոր թոքախտով շատերն են հիվանդանում. բայց ըստից գուրս

է զալիս, վոր Ռուսաստանում ամեն տարի սիֆիլիսով ավելի շատ մարդ է հիվանդանում, քան թոքախտով:

Ուրիշ յերկրներում ել դրությունը նույնն է. Միայն Փարիզում սիֆիլիսով հիվանդներ կան 700.000—ից վոչ պակաս: Բեռլինում հարյուր ազամարդից 20-ը հիվանդ է սիֆիլիսով, իսկ 100 կանանցից—15-ը: Մեր Միության մեծ քաղաքներում—Լենինգրադում, Մոսկվայում, սիֆիլիսը քիչ է, քան Փարիզում և Բեռլինում:

Սիֆիլիսը շատ վտանգավոր հիվանդություն է նախ իրենց՝ հիվանդների համար:

Սիֆիլիսը սպառնում է հիվանդի վոչ միայն առողջութայնը, այլ և նրա կյանքին: Ճիշտ է, մենք ավելի հաճախ ենք լսում, վոր այսինչը մեռավ թոքախտից և շատ քիչ ենք լսում, վոր այս ինչ մարդը մեռավ սիֆիլիսից: Գա բացատրվում է նրանով, վոր թոքախտը թոքերի հիվանդութուն է, իսկ սիֆիլիսը կարող է հարվածել մարդու մարմնի բոլոր մասերը, սկսած մաշկից ու մկանուկներէից, մինչև ներքին գործարանները, գլխուղեւն ու վոդնուղեղը: Որինակի համար վերցնենդ վոդնուղեղի չորուկ հիվանդութունը: Վոդնուղեղի չորուկը—մի շատ ծանր հիվանդութուն է, ահում է տարիներ, չի



բժշկվում և վերջանում ե լուծույթներով և մահով: Իսկ այս հիվանդութիւնը միշտ ել առաջանում ե նրանից, վոր վողնուղեղը փնասվում ե սիֆիլիսից: Գլխուղեղի սիֆիլիսով հիվանդանալը առաջացնում ե ե՛լ ավելի սարսափելի հիվանդութիւն — հարածուն լուծույթ, մի անբուժելի հիվանդութիւն, վորից հիվանդը խելագարվում, լուծույթներ ե ստանում և մեռնում: Այն մարդը, վորը յերբեք չի տառապել սիֆիլիսով, այս հիվանդութիւններից վոչ մեկն ել չի կարող ունենալ: Ուրիշ հիվանդութիւններից ես, որինսկ՝ յերկամունքների բորբոքումից, արյունատար անոթների, լյարդի, ստամոքսի, աղիքների խանգարումներից ավելի շատ ես մեռնում նրանք, վորոնք սիֆիլիս ես ունեցել: Այսպես կոչված սրտի պայթիւնից առաջացած մահվան դեպքերը սիֆիլիսոտների մեջ վեց անգամ ավելի շատ ես:

Յեթե այս բոլորը հաշվի առնենք, ապա ուրեմն պարզ կլինի, թե սիֆիլիսը ինչ ավերածութիւն ե կատարում ե այն անձանց մեջ, վորոնք զժբախտութիւն ես ունեցել վարակվել նրանով:

Միֆիլիսը շատ վտանգավոր հիվանդութիւն ե տկարի ընտանիքի յեվ սերնդի համար:

Դաս հաճախ, սիֆիլիսով հիվանդից վա-

րակվում ես նրա ընտանիքի բոլոր անդամները: Միֆիլիսով հիվանդ հղի կանանցից 90% -ը վիժում ես (100 հղի կանանցից 90-ը վիժում ես), կամ ծնում ես մեռած յերեխաներ: Յեթե կենդանի յեն ծնվում, շատ հաճախ այդ յերեխաները ծննդից մի քանի շաբաթ հետո հիվանդանում ես սիֆիլիսով և մեռնում, իսկ յեթե մի քանիսը կենդանի յեն մեռնում, լինում ես նիհար, այլանդակ, մտավորապես հետամնաց: Միֆիլիսը կարող ե յերևալ այդպիսիների վրա մինչև 13—15 տարեկան հասակը:

Ի հարկ ե, յեթե այդ տեսակ ժառանգական սիֆիլիսոտները ամուսնանան, առողջ ե յավ սերունդ նրանք չեն կարող ունենալ:

Միֆիլիսը շատ մեծ վնասներ ե տալիս պետութիւնը:

Միֆիլիսով հիվանդներից շատերն ես մեռնում. կենդանի յերեխաներ քիչ ես ծնվում, ժառանգական սիֆիլիսոտների մեծ մասը մեռնում ե, վերջապես նրանց սերունդը թուլանում ե և, ինչպես ասում ես, այլասերվում ե ցեղը:

Ուրեմն հասկանալի յե, թե ինչու յեն սիֆիլիսը համարում մի չարիք, վորը մարդկութիւնը տանում ե դեպի այլասերում և վոչնչացում:



Սիֆիլիսի հարուցիչը.

Այն վարակող մանրեն, վորը հիվանդացնում է սիֆիլիսով, կոչվում է գոգույն սպերոխիտ և նրան տեսնել կարելի չէ միայն խոշորացնող գործիքի՝ մանրադիտակի միջոցով. այդ գործիքով նայելիս սպերոխիտը մեծանում է 1000 անգամից եւ ավել: Սպերոխիտը բարակ է, գյուլաշարժ և նման է պտուտակավոր ցուպիկի:

Սպերոխիտը մտնում է մարմնի մեջ մաշկի, լորձաթաղանթի պոկվածքի կամ քերծվածքի միջոցով, ուր ել լինեն այդ քերծվածքները,—սեռական գործարանների վրա, շրթունքների վրա, բերանի մեջ, մատի վրա, կամ մարմնի մի այլ տեղում:

Այդ փոքրիկ անցքից մարդու մարմնի մեջ մտնելով, սպերոխիտը սկսում է բազմանալ, արյան հետ տարածվել ամբողջ մարմնի մեջ. նա ապրում է և աճում մարդու մարմնի թերևս ամեն մի մասի մեջ:

Ինչպես և մարդ վարակվում սիֆիլիսով.

Սիֆիլիսով կարելի չէ շատ հեշտ կերպով վարակվել սեռական հարաբերության ժամանակ. սիֆիլիսի վարակը հիվանդի սեռական գործարանների վրայի խոցից ընկնում է առողջ մար-

դու քերծվածքի կամ փոքրիկ վերքի վրա ու վարակում:

Սիֆիլիսով կարելի չէ վարակվել հիվանդից՝ առանց սեռական հարաբերության, նրա հետ անմիջապես շփվելուց, որինակ՝ համբույրի միջոցով, կամ այն առարկաների միջոցով, վորոնց վրա յեն ընկել սիֆիլիսի դեռ չչորացած մանրենները՝ հիվանդի թքի, թարախի կամ արյան հետ: Այս՝ այսպես կոչված արտասեռական սիֆիլիսը համեմատաբար քիչ է պատահում քաղաքներում, բայց գյուղերում նա մի ծանր պատիժ է, վորը մի քանի տեղ մնասում է համարյա ամբողջ ազգաբնակչությանը:

Որինակ, Ռուսաստանի ներքին նահանգներից մեկում 100 սիֆիլիսոտներից 90-ը արտասեռական հասնապարհով են ստացել սիֆիլիսը: Արտասեռական սիֆիլիսի տարածվելը բացատրվում է գյուղական կյանքի, կամ ինչպես ասում են, գյուղական կենցաղի առանձնահատուկ պայմաններով, դրա համար ել Ռուսաստանի գյուղական ազգաբնակչության արտասեռական սիֆիլիսը կոչվում է կենցաղային սիֆիլիս: Արտասեռական սիֆիլիսի տարածվելու գլխավոր պատճառը—ազգաբնակչության ագիտությունն է. պատճառն այն է, վոր ազգաբնակչությունը հասկացողություն չունի, թե ինչպես է սիֆիլիսի



վարակը հիվանդից փոխանցվում առողջին: Մարդիկ ապրում են խիստ, հիվանդներն ուտում և խմում են առողջների հետ մի ընդհանուր ամանից և սիֆիլիսի վարակը տալիս են նրանց սնակներին, գզայներին, պատառաքողներին, գավաթներին ու բաժակատակերին միջոցով: Շատ հաճախ հիվանդ կանայք ծիծ են տալիս ուրիշի յերեխաներին, վարակելով առողջ յերեխաներին սիֆիլիսով, կամ ընդհակառակն, առողջ կանայք ծիծ են տալիս սիֆիլիսով հիվանդ յերեխաներին, և իրենք ել վարակվում այդ յերեխաներից:

Մայրերն հաճախ դնում են իրենց յերեխայի բերանը ուրիշ յերեխայի ծծանը և այդ ծծանի հետ մացնում են իրենց յերեխայի բերանը նաև սիֆիլիսի վարակը:

Բազմաթիվ մարդիկ միմյանց հետ համբուրվում են՝ առանց մտածելու, վոր համբուրվողներին մեջ կան հազարավոր սիֆիլիսոտներ, վորոնք համբուրքի հետ տալիս են նաև սիֆիլիսի վարակը:

Բյուրավոր մարդիկ ծխում են ուրիշի չվերջացրած զլանակը և ծխամորճը (չիբուխը), վորոնց վրա կարող է ընկած լինել սիֆիլիսի մանրեններ պարունակող սիֆիլիսոտի թուփը: Կայարաններում ջրի տակառին շղթայով կպցրած է մի գավաթ, վորից խմում են բոլորն էլ, թե

հիվանդները և թե առողջները. կոշկակարի արհեստանոցում կոշկակարը բերանն է դնում մեխերը, վորոնցից չգործադրվածները նորից գցում է արկղի մեջ: Յեթե կոշկակարը հիվանդ է սիֆիլիսով, մեխերի վրա յե ընկնում սիֆիլիսի վարակը. իսկ մի ուրիշ կոշկակար, այդ մեխերն իր բերանը դնելով, սիֆիլիսի վարակնել է ընդունում և այդպիսով վարակվում: Գյուղերում զանազան պառավ կանայք լեզվով հանում են մեկի աչքն ընկած չոփը և հաճախ այդպիսով վարակում սիֆիլիսով: Սիֆիլիսի անից-տուն տարածվելու լավ որինակ կարող է ծառայել գյուղի հովիվը: Գյուղերում սովորութուն կա հերթով կերակրել հովվին: Հովիվը անից-տուն ման է գալիս և որը մի տանը ճաշում է ամբողջ ընտանիքի հետ միասին, մի ընդհանուր ամանից, խմում մի ընդհանուր գավաթից: Յեվ յեթե նա հիվանդանում է սիֆիլիսով, տարածում է վարակը անից-տուն: Յեթե նա ինքը հիվանդ չէ, կարող է հիվանդանալ մի տեղ՝ յեթե այդ տանը սիֆիլիսով հիվանդ կա, և հետո յել ուրիշներին փոխանցել վարակը: Մի ուրիշ որինակ ել կարելի է բերել, թե ինչպես է վարակը մի մարդուց լայն չափով տարածվում: Գյուղ է վերադառնում գործարանի մի վորևե բանվոր, կամ զորացրման յենթանկված մի կարմիր բանակային:



Յեթե նա ոտարության մեջ վարակվել է սիֆիլիսով և չի բժշկվել, տանը վարակելու է կնոջը, հաճախ նաև յերեխաներին, յերբեմն ել ծերունի ծնողներին: Յերեխաները փոխանցում են վարակը հարևան յերեխաներին՝ միմյանց հետ խաղալիս, խաղալիքները մեկ մեկու բերանը տանելիս, կամ հացի կտոր ու խնձոր ուտելիս: Յերեխաները վարակը տուն են տանում: Ահա ինչպես է գյուղի մի ընտանիքի մեջ քաղաքից ընկած վարակը տարածվում գյուղի մեջ:

Ազգաբնակչությունը ազետ է, չգիտե թե ինչպես է տարածվում սիֆիլիսը և ինչպիսի վտանգ է սպառնում նա, և այդ պատճառով ել դա ուժեղ կերպով տարածվում է ազգաբնակչության մեջ, մանավանդ գյուղական ազգաբնակչության մեջ:

Սիֆիլիսը արատավոր հիվանդությունն է.

Գյուղում սիֆիլիսը կոչվում է վատ հիվանդություն: Ինչո՞ւ յե ժողովուրդն այդպես ասում: Նրա համար, վոր այդ հիվանդությունը շատ մեծ չարիք է հասցնում մարդկանց, այլանդակ է դարձնում նրանց, նրա համար, վոր սիֆիլիսով վարակվում են սեռական հարաբերության միջոցով: Թոքախտը պակաս չարիք չէ մարդկանց համար. գայլախտը, քաղցկեղը, վորոնք

յերբեմն այնպես են այլանդակում, վոր մարդու վրա նայելն անգամ ծանր է. սակայն դրանց վոչ վոք վատ հիվանդությունն անունը չէ տալիս:

Հետևապես ժողովուրդը սիֆիլիսն անվանում է վատ հիվանդությունն նրա համար, վոր դա արատավոր հիվանդությունն էր հաշվվում, այնպիսի հիվանդությունն, վոր ստանում են սեռական հարաբերության ժամանակ: Մինչդեռ յեթե լավ քննենք, կտեսնենք, վոր մեզ մոտ սիֆիլիստաների կեսից շատ ավելին վարակվել են այդ հիվանդությամբ արտասեռական ճանապարհով:

Ուրեմն սխալ է՝ սիֆիլիսը անվանել վատ հիվանդություն. ով հիվանդացել է սիֆիլիսով, նրա համար դա արատ չէ, այլ դժբախտությունն, ինչպես և թոքախտը կամ մի ուրիշ լուրջ հիվանդություն:

Ի՞նչպես պետք է պաշտպանվել սիֆիլիսից:

Սիֆիլիսից պաշտպանվելը ավելի հեշտ է, քան մի վորևե ուրիշ հիվանդությունից. դրա համար պետք է իմանալ, թե նա ինչպես է հիվանդից անցնում առողջին:

Սեռական ճանապարհով վարակվելուց խուսափելը դժվար չէ. պետք է միայն զգուշ լինել, սեռական հարաբերություն ունենալ այնպիսի կնոջ հետ, վորի առողջ լինելուն հաստատ հավատա



ցած ես: Սխալ են նրանք, վորոնք սեռական ժուժկալուծթյունը մնասակար են համարում առողջության համար. ժուժկալներն (իրենց զապողները) ավելի ուժեղ և ավելի առույգ են լինում:

Ավելի դժվար է պաշտպանել իրեն՝ սիֆիլիսով արտասեռական ճանապարհով վարակվելուց. բայց և այնպես, յերբ մարդ գիտե, թե ինչպես է վարակը անցնում, այն ժամանակ միշտ էլ հեշտ կլինի պաշտպանվել: Պետք է խուսափել համբույրներից, չպետք է բերանը դնել ուրիշի չվերջացրած գլանակը և ծխամորձը, առանց տաք ջրով լվանալու՝ ուրիշի ամանից չուտել, չպետք է իր յերախային ուրիշ կնոջ ծիծտալ, յեթե հաստատ հավատացած չես, վոր նա առողջ է, չպետք է ծիծտալ և ուրիշի յերեխաներին, չպետք է թույլ տալ, վոր յերեխաները իրենց բերանը դնեն ուրիշներին խաղալիքները, մի խոսքով պետք է հիշել, վոր մեր շուրջը սիֆիլիսոսաներ շատ կան, վորոնք կարծես հիվանդության աչքի ընկնող վոչ մի նշան չունեն իրենց վրա, բայց վորոնք դարձյալ վտանգավոր են իրենց շրջապատողների համար. հիշելով այդ ամենը՝ զգուշության միջոցներ պետք է ձեռք առնել: Սիֆիլիսից պաշտպանվելը նախ և առաջ կախված է յուրաքանչյուրի բարի կամքից:

*Ի՞նչպիսի ընթացք ունի սիֆիլիսը:*

Սիֆիլիսը վարակիչ հիվանդություն է, վորը յերբ չեն բժշկում, ձգձգվող բնույթ է ընդունում և, ինչպես ասում են, տևական է դառնում, յերկար տարիներ է տևում, մերթ մեղմանում է, մերթ նորից բռնկվում:

Վարակվելիս, սիֆիլիսի վարակը ամենից առաջ հայտնվում է այնտեղ, վորտեղից նա մտել է մանմի մեջ: Վարակումից 2—3 շաբաթ անց, վարակի մտած տեղում գոյանում է մի փոքրիկ կոշտուկ (հանգույցիկ), վորն աստիճանաբար մեծանում է: Հանգույցի վրայի կաշին պլոկվում է, գոյանում է խոցիկ, վորն աստիճանաբար մեծանում է: Այս առաջին նշանը կոչվում է կարծր շանկր: Կարծր շանկրի խոցը խորը չէ, շատ քիչ թարախ է տալիս, համարյա թե չի ցավում, կարմիր գույնի յե և ունի կոճիկի պես կոշտ կողեր և հատակ:

Կարծր շանկրը կարող է գոյանալ մարմնի վրա ամեն տեղում: Շանկրի յերևալուց  $1\frac{1}{2}$  շաբաթ անց, ավշային մոտակա գեղձերն ուռչում են, կոշտանում, բայց չեն ցավում: Յեթե կարծր շանկրը մաքուր պահեն և կանոնավոր կերպով բժշկեն, այն ժամանակ նա շատ չի մեծանում և շուտ էլ լավանում է: Կարծր շանկրը կարող



ե լավանալ և առանց բժշկութեան: Կարծր շանկերը սիֆիլիսի առաջին շրջանն է, այսպես կոչվող սկզբնական սիֆիլիսը:

Յեթե սիֆիլիսով հիվանդը, կոշտ շանկրն յերևալուն պես, չի սկսում կանոնավոր բժշկվել, այն ժամանակ շանկրի յերևալուց 5—6 շաբաթ անց հիվանդի մարմնի, ձեռքերի, վրաների վրա յերևան են գալիս վարդագուլն փոքրիկ պուտեր — ցան: Յերբեմն այդ ցանը շատ-շատ է լինում, իսկ յերբեմն ել շատ դժվարութեամբ կարելի չէ լինում գտնել առանձին պուտիկները: Այդ ցանը կոչվում է սիֆիլիսային վարդացան: Յանի գուրս տալուց առաջ հիվանդն իրեն հաճախ վատ է զգում, — նա տաքացնում է, գլուխն է ցավում, վոսկորները կարծես ջարդվում են՝ մանավանդ գլխերները, հետագայում սկսում են թափվել նաև գլխի մազերը:

Ամբողջ մարմնի գեղձերն ուռչում են՝ պարանոցի վրա, ականջի յետևը, կոնատակերում, արմուկների ծալքում և աճուկների վրա:

Յանը միշտ ել պուտերի նման չի լինում, յերբեմն նա գուրս է գալիս մաշկի վրայից՝ բարձր կլեպով ծածկված հանգուցիկների նման: Այդ տեսակ հանգուցիկները կոչվում են բշտիկներ: Հանգուցիկներին մի քանիսը կարող են թարա-

խոտվել, միմիանց հետ միանալ և կլեպով ծածկվել:

Յետույքի շուրջը, կանանց ծծերի տակ, սեռական գործարանների վրա, կոնատակերում, ականջների յետևը, բերանի անկյուններում այդ բշտիկները կարող են դառնալ այսպես սասած թաց բշտիկներ, վորոնք յերբեմն շատ ցավում են: Սիֆիլիսի ցանը կարող է յերևալ բերանի մեջ, բկի մեջ, կոկորդի մեջ. վերջին դեպքում հիվանդի ձայնը խոպոտ է դառնում (քաշվում է): Բժշկվելիս՝ այս նշանները անհետանում են, նրանք յերբեմն ինքն-իրան են անհետանում, բայց կարող են և կրկնվել: Վերոհիշյալ ցանի գուրս տալը կոչվում է սիֆիլիսի յերկրորդ շրջան, բշտիկների շրջան: Սիֆիլիսի յերկրորդ շրջանը կարող է մի քանի տարի տևել:

Առաջին շրջանի և մանավանդ յերկրորդ շրջանի սիֆիլիսը շատ վարակիչ է և շատ հեշտութեամբ անցնում է հիվանդից առողջին: Յերկրորդ շրջանի սիֆիլիսը շրջապատողներին մեծ վտանգ է սպառնում: Սիֆիլիսի մյուս շրջանը, վորը յերևան է գալիս յերկրորդից հետո, կոչվում է յերրորդ շրջան. դա յերկար տարիներ է տևում և շատ վտանգավոր հիվանդութուն է հենց իրեն՝ հիվանդի համար: Սիֆիլիսի յերրորդ շրջանը սկսվում է այն նշանով,



վոր հիվանդի մարմնի գոնազան մասերում և ներքին գործարաններում առաջ են գալիս ուռուցքներ, վորոնք կոչվում են գումամաներ, ուստի և յերբորդ շրջանը կոչվում է գումամաների շրջան:

Այդ ուռուցքները ընկույղի մեծության են, յերբեմն ընկույզից ել մեծ, նրանք փափկում են, բացվում և յերկար ժամանակ չլավացող խոցեր են գոյացնում: Այդ խոցերն առանձնապես լինում են սրունքների վրա. վոսկորների վրա ևս կարող են յերևալ այդ ուռուցքները և քայքայել նրան: Յեթե քայքայվում են քթի վոսկորները՝ քիթը նստում է: Գումամային ուռուցքները կարող են լինել լյարդի մեջ, սրտի մեջ, ստամոքսի մեջ և մարմնի ուրիշ գործարանների մեջ:

Առանձնապես ծանր ընթացք ունեն գլխուղեղի և վոզնուղեղի գումամաները: Բացի այդ, գլխի ուղեղն ու վոզնուղեղը կարող են գուտաներվային հիվանդությունն ստանալ սիֆիլիսի ազդեցությունից: Վոզնուղեղի այդ հիվանդությունը կոչվում է վոզնուղեղի չորուկ, իսկ գլխի ուղեղի հիվանդությունը՝ հարածուն լուծույթ:

Կարելի՞ յե արդյոք բժշկել սիֆիլիսը:

Թեև սիֆիլիսը ծանր հիվանդություն է, բայց և այնպես բժշկելի յե նա:

Գերմանիայի ականավոր պրոֆեսսոր Նեյսսերը, վոր ամենահայտնի սիֆիլիսագետն է, իր գրքի մեջ ասում է՝ «Սիֆիլիսի վորոշման և բուժման մասին ունեցած մեր գիտելիքներն այնքան են առաջադիմել, վոր մենք առանց մտավախության կարող ենք ասել, վոր սիֆիլիսը վոչ միայն բուժելի յե, այլ և դյուրին բուժելի. նա պատկանում է ամենահեշտ բուժվող հիվանդությունների շարքին, մի պայմանով միայն, վոր բուժումը տարվի ըստ պատշաճի: Սիֆիլիսը սպառնում է իր սոսկալի հետևանքներով միայն նրանց, ով անբավարար է բժշկվել կամ ամենևին չի բժշկվել»:

Սիֆիլիսի բուժման միջոցին պետք է հիշել, վոր նա յերկար հիվանդություն է, «տևական» է, իբրև տևական հիվանդություն՝ պահանջում է և յերկար բուժում: Բուժման յերկարությունը կախում ունի այն բանից, թե վո՞րքան է հնացած հիվանդությունը:

Հիվանդության նշանների անհայտանալը դեռ չի նշանակում, վոր հիվանդությունն անցել է, ապա ուրեմն յուրաքանչյուր սիֆիլիսոտ, յեթե մինչև անգամ իրեն լավ է զգում և յեթե նա չի նկատում հիվանդության մի նշան անգամ, պետք է յուրաքանչյուր 2-3 ամիսը մեկ անգամ



ներկայանա բժշկին, վորը և կվորոշի՝ ժամանակ չե՞ արդյոք կրկնել բուժումը:

Սիֆիլիսով հիվանդը չը պետք է գեղիս կյանք վարի, չպետք է խմիչք գործածի: Արբեցողները սիֆիլիսն ընթանում է ծանր: Ծխելը նույնպես ֆլաս է սիֆիլիսոտաների համար:

*Սիֆիլիսը յեվ ամուսնութունը:*

Ով հիվանդ է սիֆիլիսով, կարող է ամուսնանալ, չվախենալով ֆլասել ընտանիքի և սերնդի առողջությանը, միայն այն պայմանով, յեթե նա կանոնավոր բժշկվել է բժշկի հսկողության տակ և յեթե բժշկվելուց հետո անցել է 2 տարի՝ հիվանդության առանց մի նշանի: Ով յերբեկոց հիվանդացել է սիֆիլիսով, յերբեք չպետք է ամուսնանա առանց փորձված մասնագետ բժշկի թույլատվության:

**ՍՈՒՍՆԱԿ**

Սուսանակը սովորաբար հաշվում են մի թեթև և հեշտ հիվանդութուն, մինչդեռ հիվանդին, նրա ընտանիքին և պետությանը իր հասցրած չարիքով՝ նա շատ քիչ է տարբերվում սիֆիլիսից:

*Սուսանակի հարուցիչը:*

Սուսանակ առաջ բերող վարակը—մանրեն—

կոչվում է գոնոկոկ. նա գտնվում է սուսանակով հիվանդների թարախի մեջ և մանրադիտակի տակ նա նման է սուրճի՝ միասին վերցրած յերկու հատիկի: Գոնոկոկը վարակիչ է, քանի վոր թարախի մեջն է, քանի վոր թարախի մեջն է նա, և քանի վոր չի չորացել թարախը:

*Սուսանակի վարակը ինչպես է փոխանցվում:*

Սուսանակով վարակվում են սովորաբար սեռական հարաբերության ժամանակ: Հաճախ սուսանակով հիվանդանում են և փոքր աղջիկները. դրա պատճառն այն է, վոր հիվանդ մայրերը իրենց մոտ են պառկեցնում յերեխաներին, կամ այն, վոր յերեխաներին լվանում են կամ սրբբում հիվանդների կեղտոտված սպունգով, ճլուպի կտորով կամ սրբիչով:

Հաճախ նորածինների աչքերն են հիվանդանում սուսանակով: Ծննդի ժամանակ, յերբ յերեխան անցնում է հիվանդ մոր սեռական գործարանների միջով, թարախի մի կաթիլ կարող է ընկնել նորածին յերեխայի աչքի մեջ և վարակել. և յեթե պատշաճավոր կանխարգելիչ միջոցներ ձեռք չառնվեն, այն ժամանակ նորածնի աչքերը կբորբոքվեն, վորից հաճախ կուրանում է մանուկը: Միևնույնը կպատահի և առողջ մար-



դուն, յեթե անսխալութեան պատճառովն րա աչքը ընկնի սուսանակի թարախը:

Ի՞նչպէս ե ընթանում սուսանակը:

Սուսանակը սկսվում ե սեռական հարաբերութեան Յ-5 որ հետո, միզուկից թարախ ե հոսում ե միզելիս ցավում ե: Տարածվելով միզախոտովակի խոր մասերի վրա, սուսանակային բորբոքումը կարող ե անցնել միզափամփուշտին ե բորբոքումն առաջ բերել:

Հիվանդը շուտ շուտ միզել ե ուզում, դեռ չմիզած՝ ցավ ե զգում ե միզելուց հետո ել արյուն ե գալիս: Յերբեմն սուսանակային բորբոքումն բարձրանում ե վեր ե առաջ ե բերում յերիկամունքների բորբոքումն—մի շատ լուրջ հիվանդութիւն:

Հաճախ առաջ ե գալիս հողերի սուսանակային բորբոքումն, մի հիվանդութիւն, վոր սապտիկ տանջանքներ ե պատճառում հիվանդներին ե մահաճակալին ե գամում նրանց յերկար ամիսներով, կամ այլանդակում ե, հողերի անշարժութիւնն առաջ բերում: Յերբեմն արյունն ե վարակվում գոնոկոկներով, վորից առաջ ե գալիս սրտի փականքների բորբոքում, վոր միշտ ել մահով ե վերջանում: Սուսանակը կարող ե մի շարք բարդութիւններ տալ. տղամարդկանց—մականոր-

ծիների բորբոքում, վորը յերբեմն յերկու կողմից ե լինում (իսկ դա ամուլթիւնն ե առաջ բերում), շականակագեղձի բորբոքումն. այդ գեղձը գտնվում ե միզախոտովակի փամփուշտը մտնելու տեղում—այդ գեղձի բորբոքումը սուսանակի ամենահաճախ բարդութիւններից մեկն ե ե շատ դժվար ե բուժվում: Յեթե տղամարդու սուսանակը յերկար ե տևում, կարող ե միզախոտովակը նեղանալ, վորը սովորաբար պահանջում ե վիրահատութիւն, հակառակ դեպքում հիվանդը կարող ե մեռնել: Կանանց բարդութիւններն առավել ես շատ են ե լուրջ, քան տղամարդկանցը: Կանանց սուր տեսակի սուսանակը ավելի թեթե ե անցնում, քան տղամարդկանցը, յերբեմն աննկատելի, բայց հաճախ դառնում ե տևական, յերկարատև, փասելով կնոջ սեռական ներքին դործարանները ե պատճառ ե դառնում այսպէս ասած կանանց հիվանդութիւնների մեծ մասի: Շատ տանջանքներ են պատճառում կնոջը կանանց հիվանդութիւնները ե այդ պատճառով ել սուսանակն արդարացի կերպով համարվում ե կնոջ համար մի պատուհաս, նա կնոջ ամենակորստաբեր հիվանդութիւններից մեկն ե: Հաճախ տեսնում ենք, ինչպէս ծաղկափթիթ յերիտասարդ առջիկն ամուսնութիւնից հետո իսկույն սկսում ե թա-



ուսմել և մի քանի տարուց հետո հաշմանդամ ե գառնուում: Յեվ հաճախ այս բուրբի պատճառը չբժշկված սուսանակն ե:

Կանանց հիվանդությունները շատ դժվար են բուժվում, յերկար տարիներ տանջում են կնոջը և հաճախ նրա մահվան պատճառ դառնում:

Կանանց սեռակտն գործարանների վրա կատարվող բոլոր ոպերացիաների <sup>2</sup>/<sub>3</sub> մասի պատճառը սուսանակն ե: Կանանց սեռական գործարանների տեակտն բորբոքման հետեանքը լինում ե կատարյալ ամուություն՝ յերբ արեանկին չի լինում յերեխա, կամ մամնակի՝ յերբ առաջին ծննդից հետո յե կինը կտրվում բերքից:

*Բուժելի՞ յե արդյոք սուսանակը*

Սուսանակը մի այնպիսի հիվանդություն ե, վոր դժվար չե բժշկելը, յեթե սկսենք բժշկել հենց սկզբից և յեթե հենց առաջին որից դիմենք բժշկին: Յեթե իսկույն չսկսել բժշկելը, սուսանակը տեակտն ե դառնում, յերկար տարիներ ե քաշում, վարակիչ հատկությունը պահպանում ե յերկար ժամանակ և պահանջում ե համառ բուժում: Ով հիվանդացել ե սուսանակով, պետք ե զգուշական միջոցներ գործադրի, վոր խուսափի բարդություններից: Սուսանակով հիվանդը չպետք ե խմի ողի, գինի, գարեջուր և ուրիշ

վոգելից խմիչքներ, չպետք ե խմի թուղ թեյ, սուրճ, գելտերի ջուր, լիմոնադ և ուրիշ հանքային ջրեր: Նա չպետք ե ուտի թթու և աղի կերակուրներ, նույնպես և կծու համեմներ (պղղպեղ, մանանեխ և այլն): Սուսանակով հիվանդը չպետք ե բարձրացնի ծանրություններ, չպետք ե նստի ձի կամ հեծանիվ: Շատ փսաս ե հիվանդի համար սեռական մերձավորություն ունենալը: Հիվանդն որեկան մի քանի անգամ պետք ե լվանա սեռական գործարանները գոլ ջրով ե սրբի մաքուր շորով: Ամեն անգամ սեռական գործարաններին ձեռք տալուց հետո պետք ե շատ մաքուր լվանա ձեռքերը, վոր սուսանակի վարակը աչքերի մեջ չգցի:

Այս միջոցների հետ միասին յուրաքանչյուր հիվանդ պետք ե սկսի բժշկվել վորքան կարելի յե շուտ և վոչ մի դեպքում չպետք ե դիմի տնային հեքիմներին և չպետք ե լսի ընկերների խորհուրդները:

Սուսանակը ամեն դեպքումն ել միատեսակ չի բժշկվում: Մի ձևի բուժումը կարող ե ոգնել մեկին, իսկ մյուսին կարող ե փսասել: Միայն բժիշկը գիտե՝ թե հիվանդին ինչպեսի բժշկություն ե հարկավոր նշանակել: Հեքիմները չեն բժշկում, այլ վատացնում են կամ կիսատ թողնում: Շատ անբախտներ կան, վորոնք բժշկվել են հեքիմների մոտ



կամ ընկերներէ խորհուրդով և կարծել են, վոր՝ բժշկվել են իրենց հիվանդութիւննից, բայց հետո շատ են զղջացել, յերբ սուսանակը առաջ ե բերել զժվար բուժելի բարդութիւններ:

Սուսանակը յեվ ամուսնութիւնը.

Շատերը կարծում են, վոր կաթոցը կտրվելուց հետո վերջանում է և սուսանակը և, համարելով իրենց առողջ, ամուսնանում են. մեկ ել տեսնես, մի քանի ամսից հետո, յերբեմն ել մի քանի շաբաթից հետո, կինը տկարանում է կանացի հիվանդութիւնով, վորը շատ զժվար է բուժվում: Տղամարդկանց սուսանակը կարող է տարիներով գաղտնի մնալ և միևնույն ժամանակ չկորցնել իր վարակիչ հատկութիւնը: Ահա թե ինչու համար սուսանակով յուրաքանչյուր հիվանդ պարտավոր է ամուսնութիւնից սեռական հարաբերութիւն ունենալուց առաջ գնալ բժշկի մոտ և թույլտվութիւն ստանալ, մինչև անգամ այն ժամանակ, յերբ հիվանդութիւնը հետքն անգամ չի նշմարվում:

Սուսանակը շատ տարածված հիվանդութիւնն է.

Սուսանակը շատ է տարածված մանավանդ քաղաքներում՝ տղամարդկանց և կանանց մեջ, ազգաբնակչության բոլոր խավերում: Քաղաքներում ապրող տղամարդկանց  $\frac{3}{4}$ -ից ավելին յե-

ղել է սուսանակով հիվանդ: Համարյա բոլոր՝ այսպես ասած կանանց հիվանդութիւններն առաջ են յեկել սուսանակից: Իսկ թե վորքան շատ են տարածված կանանց հիվանդութիւնները, դա հայանի յե նրանից, վոր 100 կանանցից, վորոնց ամուսինները սուսանակ են ունեցել, 70-ը կանանց հիվանդութիւն ունին: Ռուսաստանում 2 միլիոն կին է բժշկվում կանանց հիվանդութիւններից: Իսկ վորքան հիվանդ կանայք կան, վորոնք հնարավորութիւնն չունեն զիմելու բժշկին:

Սուսանակը մեծ վտանգ է սպառնում պետութիւնը.

Սուսանակն այնպիսի հիվանդութիւնն է, վոր քայքայում է ազգաբնակչության առողջութիւնը. միևնույն ժամանակ պետութիւնը համար նա շատ վտանգավոր է նրանով, վոր դառնալով տղամարդկանց և կանանց ամուսնային պատճառը, շատ խիստ պակասեցնում է ազգաբնակչության թիվը: Յերելիա չունեցող 100 ամուսնացած զույգերից 67-ի պատճառը սուսանակն է: Մեկ յերելիա ունեցող 100 ամուսնացող զույգերից 71-ի պատճառը սուսանակն է: Թե վորքան մեծ ազդեցութիւն ունի սուսանակը ծննդաբերութիւն վրա, դա յերևում է նրանից, վոր միայն



Գերմանիայում սուսանակի պատճառով ամեն տարի 200,000-ով պակաս են ծնվում:

Սուսանակը հաճախ պատճառ է դառնում կուրուլթյան. Ռուսաստանում մի տարեկան հասակում 100 կուրացածներից 56-ը կուրանում են աչքերի սուսանակի բորբոքումից, իսկ 44-ը ուրիշ պատճառներից:

ՓԱՓՈՒԿ ՇԱՆԿՐ.

Փափուկ շանկրն ամենաթեթևն է բոլոր վեներական ախտերից: Այդ հիվանդությունն առհասարակ շատ շուտ է բժշկվում և իրենից հետո վոչ մի հետևանք չի թողնում թե հիվանդի և թե նրա ընտանիքի վրա: Փափուկ շանկրով վնասվելը բացառապես տեղի է ունենում սեռական հարաբերության միջոցով:

Փափուկ շանկրի վարակիչ մանրեն գտնվում է փափուկ շանկրի թարախի մեջ: Ուժեղ մեծացնելիս՝ այդ մանրեն նման է շղթայով միմիանց հետ կպած ցուպիկների: Ինչպես սուսանակի և սիֆիլիսի մանրենները, փափուկ շանկրի մանրեն ևս անհետանում է թարախի չորանալուց հետո:

Փափուկ շանկրով վարակումը հայտնվում է սեռական հարաբերություններից 2—3 օր հետո: Սկզբում յերևան է գալիս մի փոքրիկ բշտիկ, վորը բացվում և դառնում է խոց: Շատ հաճախ

միաժամանակ լինում են մի քանի խոցեր: Խոցը մեծանում է, արտադրում է մեծ քանակությամբ թարախ, ցավ է տալիս: Խոցի յեզրները և հատակը փափուկ են, դրա համար ել այդ տեսակ խոցը կոչվում է փափուկ շանկր՝ զանազանելու համար կարծր շանկրից, սիֆիլիսային շանկրից:

Յեթե փափուկ շանկրն սկսեք իր ժամանակին և կանոնավոր բժշկել, նա 2—3 շաբաթից հետո կանցնի: Յերբեմն փափուկ շանկրը տալիս է բարդություններ: Փափուկ շանկրի ամենահաճախ բարդությունը—աճուկների գեղձերի ուռչումն է, վորոնք յերբեմն թարախակալում են, բացվում և դառնում են զանդաղ բուժվող խոց: Յեթե մաքուր չպահել, յեթե կանոնավոր չբժշկել, փափուկ շանկրը կարող է խիստ մեծանալ և սեռական գործարանները քայքայել: Բայց այս դեպքում ել վերջիվերջո փափուկ շանկրն անցնում է՝ առողջությանը առանց մի վորևե վնաս հասցնելու:

Յերբեմն ել փափուկ շանկրով վարակվելու հետ միասին վարակվում են նաև սիֆիլիսով. այդ ժամանակ հիվանդությունը սկսվում է փափուկ շանկրով, իսկ հետագայում, 2 շաբաթից հետո, միևնույն տեղում առաջ է գալիս կարծր շանկրը, սիֆիլիսի շանկրը:



Այդ կարող ե փորոշել միայն բժիշկը. ուրեմն փափուկ շանկրով յուրաքանչյուր հիվանդ պետք ե գտնվի բժշկի խիստ հսկողութեան տակ:

Ինչո՞ւ յեն վեներական ախտերը կոչվում սոցիալական հիվանդութեաններ:

Վեներական ախտերը, մանավանդ սիֆիլիսն ու սուսանակը, շատ մեծ չարիք են մարդկութեան համար: Թոքախտի հետ միասին վեներական ախտերը կոչվում են սոցիալական հիվանդութեաններ, այսինքն այնպիսի հիվանդութեաններ, վորոնց տարածումը խիստ կապված ե սոցիալական հասարակական առանձին տեսակի պայմանների հետ: Ի հարկե, մի քանի ուրիշ վարակից հիվանդութեաններ ևս, որինակ՝ տիֆը, խոլերան, տրախոման նույնպես կապ ունեն հասարակական կյանքի պայմանների հետ: Այդ հիվանդութեանների տարածման պատճառների դեմ կարելի յե պայքարել՝ առանց արմատապես փոխելու հասարակական ամբողջ կյանքի պայմանները: Քաղաքակրթված յերկրներում, որինակ՝ Ամերիկայում, Անգլիայում, Ֆրանսիայում և Գերմանիայում տիֆի, խոլերայի, տրախոմայի և ուրիշ վարակիչ հիվանդութեանների դեմ մղվող պայքարը հաջողութեամբ ե տարվում, և այնտեղ այդ հիվանդութեանները գնալով պակաս

սում են: Այլ բան ե թոքախտի և վեներական ախտերի դեպքում:

Չնայած վոր այդ հիվանդութեանների դեմ ևս ուժեղ պայքար ե տարվում, ինչպես և ուրիշ վարակիչ հիվանդութեանների դեմ, բայց և այնպես թոքախտը, մանավանդ վեներական ախտերը, տարեց տարի շատանում են Ֆրանսիայում, Ամերիկայում, Անգլիայում, Յապոնիայում, Գերմանիայում և Իտալիայում, մի խոսքով՝ բոլոր կապիտալիստական յերկրներում: Չանագան յերկրներում վեներական ախտերի՝ տարածման թվերը ցույց են տալիս, վոր մի յերկրում վորքան շատ ե զարգացած կապիտալիզմը, այնքան և շատ են տարածված վեներական ախտերը:

Վորոնք են այն պատճառները, վորոնք շաղկապված լինելով կապիտալիստական հասարակութեան կյանքի պայմանների հետ՝ առաջ են բերում վեներական ախտերի անդադար աճումը:

Վեներական ախտերի տարածման գլխավոր աղբյուրը—պոռնիկութեանն ե,—կինը ծախում ե իր մարմինը:

Պոռնիկութեան—կապիտալիզմի այդ անիծած ուղեկցի—հարցը մեծ հարց ե, նրա մասին կարելի յե մի ամբողջ գիրք գրել: Իսկ այժմ մենք միայն համառոտակի նիշենք, թե ինչից ե առաջ գալիս պոռնիկութեանը և ինչու են նրան համա-



ըում կապիտալիզմի անդամական ուղեկիցը:

Դեռ ցարական կարգերի ժամանակ Լենին-գրադի (Պետրոգրադի) տպարանական բան-վորի ամսական միջին աշխատավարձը 34 ռ. 70 կոպեկ էր, բանվորուհունը 13 ռ. 90 կոպեկ:

Մոտավորապես միևնույն ժամանակները Ուդեսայում հետազոտման յենթարկվեցին 26000 գործակատարների և գործակատարուհի-ների կյանքի պայմանները, վորից հայտնի դարձավ, վոր տղամարդկանց ամսական միջին աշխատավարձը 34 ռուբլի յեր, իսկ կանանցը 13 ռուբլի. գործակատարուհիների  $\frac{1}{3}$ -ը ամսա-կան 10 ռուբլուց պակաս էյին ստանում և այն էլ այն պայմանով, վոր աշխատեյին ամ-բողջ օրը, վոր պարտավոր էյին ունենալ սե-փական բնակարան, ճաշ, պարտավոր էյին կա-նոնավոր հագնվել: Այդպես էր բանվորուհու զրությունը Ռուսաստանում հեղափոխությունից առաջ՝ աշխատանքի զանազան բնագավառներում. այդպես էր և այդպես է այժմ բոլոր կապիտալիս-տական յերկրներում: Պետք է հիշել նաև այն, վոր կապիտալիստական յերկրներում պետական հաս-տատությունների մեջ կանայք տեղ չունեն:

Ապա վերցնենք այն աղջկա զրությունը, վորի խնամքին են մնացել աշխատանքի անըն-դունակ ծերունի ծնողներն, անչափահաս յեղ-

բայրներն ու քույրերը, վորոնց կերակրել է հար-կավոր:

Ապա վերցնենք այն միայնակ կնոջ զրությու-նը, վորի խնամքին յերեխա կա: Վո՞րտեղից կա-րող էր աշխատանք գտնել այն կինը, վոր յերեխա ունի. Գործարա՞ն գնալ: Ապա ի՞նչ անել յերե-խային: Ապաստարա՞ն հանձնել: Բայց կապիտա-լիստական կարգերում ապաստարանները, յեթե անգամ տեղ լինի յերեխաների համար, բանտեր են կամ գերեզմանոց: Սպասուհի՞ դառնալ. բայց ո՞վ սպասուհի կվերցնի կնոջը՝ յերեխայի հետ միա-սին: Չե՞ վոր այն տներում, ուր ամեն օր խըն-ճուքներ են սարքվում, վորտեղ մի հյուրի մեկ օրվա կերած-խամծի ծախքը կբավականանա մի մարդու՝ մի ամբողջ տարի կերակրելու համար, այդտեսակ տներում խոհանոցում տեղ չկա այն սպասուհու համար, վորն ունի մի ավելորդ ուտող բերան: Յեվ յերեխա ունեցող անտեր կինը մնում է կանգնած Յ ճամբի վրա. այսինքն՝ կամ գնա կորչի թե ինքը և թե յերեխան, կամ կոր-ստյան մատնի յերեխային և ինքը թեթևանա, կամ փրկի յերեխային, բայց կորչի ինքը:

Յեվ կանայք գնում են այս յերեք ճանա-պարհով հարյուր հազարով, միլլիոններով: Նրան-ցից շատերն ընտրում են յերբորդ ճանապարհը: Փրկում են յերեխաներին և կորստյան մատ-



նում իրենց, դառնալով ծախու ապրանք: Յեթե դրան ավելացնենք գյուղացու աղջկա գրությունը, վորին քաղաք ե քշում քաղցը, առանց նյութական միջոցների, առանց ծանոթության. քաղաքում նա ընկնում ե վորոց. յեթե դրան ավելացնենք այն դեռատի աղջիկների գրությունը, վորոնք քարշ են գալիս նկուղներում, գիշերանոցներում, անբարոյականության և արբեցողության մթնոլորտում, այն ժամանակ ձեր աչքերի առաջ կբացվի իրավազրկության և նյութական հարստահարության այն սարսափելի վիճակը, վորի մեջ հեծում են կապիտալիստական հասարակության միլլիոնավոր կանայք:

Այսպես ե հարցի մի կողմը. պետք ե մյուս կողմն ել վերցնել: Մենք ասացինք, վոր պոռնիկությունն ե ցանում վեներական ախտեր. բայց չե՞ վոր այդ հիվանդությունները պոռնիկի հետ չեն ծնվում: Չե՞ վոր պոռնիկները ծնված ուրից հիվանդ չեն լինում վեներական ախտերով: Մի ուրիշ մարդ ե տալիս պոռնիկին վեներական ախտը և այդ ուրիշն ել պոռնիկության հետևանքով ե ստանում այդ հիվանդությունը և տարածում իր շուրջը: Տղամարդիկն են տալիս պոռնիկներին և տղամարդիկն են ստանում պոռնիկներից այդ հիվանդությունը, այն տղամարդիկ,

վորոնց գցում ե պոռնիկության գիրկը սեռական քաղցը:

Մենք ցույց ավինք այն պատճառները, վորոնք հրում են կնոջը իր մարմինը ծախելու ճամբան. պետք ե վորոշել և այն պատճառները, վորոնք ստիպում ե տղամարդկանց գնել այդ մարմինը: Այստեղ ել գլխավոր պատճառը նյութական գրությունն ե:

Հողի սակավությունը, աշխատանքով իրեն և ընտանիքին կերակրելու անկարողությունը պոռնիկում ե գյուղացուն ընտանիքից և հրում քաղաք՝ կողմնակի աշխատանքի. քաղաքի աշխատավորի չնչին աշխատավարձը հնարավորություն չի տալիս ամուսնանալ իր ժամանակին: Կապիտալիստական հասարակության պայմաններում ամուսնությունը շքեղությունն ե, վորն ամեն մարդ չի կարող իրեն թույլ տալ: Մարդ և կին կարող են աշխատել մինչև այն ժամանակ, քանի յերեխա չկա: Կապիտալիստական հասարակության մեջ պետությունը իր վրա չի վերցնում յերեխաների կրթությունը. բայց վորովհետև յերեխաների ծնվելուց հետո մայրը գլխովին տարվում ե ընտանիքով, ընտանիքի պահպանման ամբողջ հոգան ընկնում ե հոր վրա, վորի աշխատավարձը հազիվ ե բավարարում մեկ անձի կերակրելու համար: Այդ ե պատճառը,



վոր քաղաքի ազգաբնակչության մեջ ամուսնացողների միջին հասակը 28—30 տարին է: Մենք տեսնում ենք բանակի մեջ ընտանիքից կտրված հայրեր՝ 100.000-ով:

2<sup>6</sup> վոր բանակի գոյությունը սերտ կապված է կապիտալիստական տնտեսութեան գոյութեան հետ: Կապիտալիստական աշխարհին բանակը հարկավոր է իրենց շահերի և արտոնութեանների պաշտպանութեան համար: Մենք ել ունենք կարմիր բանակ, բայց խորհրդային յերկրները կարմիր բանակը պահում են կապիտալիզմի գիշատիչներից պաշտպանվելու համար:

Ահա այդ տղամարդիկ՝ 100.000, միլիոնավոր տղամարդիկ, վորոնց մի մասը կտրված է ընտանիքից, մյուսները հնարավորութեան չունեն ընտանիք կազմելու, ընտանեկան ուրախութեան ուրվական վորոնելու համար ընկնում են պոռնկութեան գիրկը և ուրախութեան փոխարեն գտնում են հիվանդութեան: Վարակվելով վեներական ախտերով և կանոնավոր կերպով չբժշկվելով, այդ տղամարդկանցից վոմանք վերադառնալով տուն, տալիս են վարակն ընտանիքին, մյուսներն ամուսնանում են և հենց առաջին որից վարակում են իրենց կանանց, վորոնք մինչև այդ որը կամ դեռ չեն վարակվել, կամ յեթե վարակված են յեղել, արդեն բժշկվել եյին:

Այս բոլորը պարզ բացատրում է, թե ինչու յեն վեներական ախտերը կոչվում սոցիալական հիվանդութեաններ:

Ի՞նչպես է Խորհրդային Իշխանութեանը կովում վեներական ախտերի դեմ:

Վեներական ախտերը բուժելի յեն, յեթե միայն սկսենք նրանց բժշկել ժամանակին: Վեներական ախտերի դեմ մղվող պայքարի գործում մեծ դեր է խաղում բուժումը: Յեվ այդ պատճառով Առողջապահութեան Ժողովրդական կոմիսարիատը վեներական ախտով տառապողների համար որ ավուր ավելի ևս շատացնում է թե հիվանդանոցների և թե բուժարանների թիվը:

Բայց վեներական ախտերի աճումը միայն բուժումով չի կարելի կանգնեցնել: Արևմտյան յերկրներում ևս հիվանդների բուժման գործը որեցոր դեպի լաֆլե գնում, բայց միևնույն ժամանակ Ֆրանսիայում, Ամերիկայում, Անգլիայում, Յապոնիայում, Գերմանիայում և Իտալիայում, մի խոսքով բոլոր կապիտալիստական յերկրներում վեներական ախտերով տառապողների թիվը տարեց տարի ավելանում է: Այս բոլորի պատճառները հեշտ է հասկանալ, յեթե վերհիշենք այն, ինչի մասին նախընթաց գլխում արդեն ասացինք: Վեներական ախտերը կապիտա-



լիզմի անդամաճան ուղեկիցն են, վորոնք աճում են կապիտալիզմի աճման հետ միասին: Կապիտալիզմի աճումից շատ ու շատ հարստանում են անհատ կապիտալիստները և սրա հետ միասին ավելի ու ավելի աղքատանում ազգաբնակչության մեծամասնութիւնը, իսկ այդ նշանակում է, վոր ավելի ևս ավելանում է թիֆն այն անձանց, վորոնք պոռնկութեան գիրկն են ընկնում, վորով ավելի ու ավելի յե աճում պոռնկութիւնը և դրա հետ միասին ավելի ու ավելի շատ են տարածվում վեներական ախտերը:

Յեթե պետութիւնն իրոք ցանկանում է հաղթահարել վեներական ախտերը, նա պետք է ազատագրի կնոջը իրավունքի և տնտեսական խնդրում, պետք է իրական ձևով պաշտպանի կնոջը, վորպես մոր, պետք է պաշտպանի նրա յերեխաներին, պետք է ընդունի յերեխաների պետական կրթութիւնը, պետք է ընձեռնի հաշմանդամներին սոցիալական ապահովութեան, պետք է պաշտպանի յերեխաներին մինչև նրանց չափահաս դառնալը, և միայն այն ժամանակ կվելանան այն պատճառները, վորոնք հրում են կնոջը դեպի իր մարմինը ծախելու ուղին:

Այս բոլորի հետ միասին պետութիւնը պետք է կատարի գործի յերկրորդ մասն ևս, վորպես սգի վերանան պոռնկութեան գիրկը նետվողները:

Սրա համար պետք է ստեղծի այնպիսի պայմաններ, վոր յուրաքանչյուր բանվոր և յուրաքանչյուր գյուղացի ի վիճակի լինի ապրել բնականոն ամուսնական կյանքով: Պետութիւնը նաև պետք է արձակի ամուսնութեան կապերը, պետք է ամենքին հնարավորութիւն տա ամուսնանալ այն ժամանակ, յերբ նա ուզում է, և վոչ այն ժամանակ, յերբ նա կարող է: Պետք է իր վրա վերցնի յերեխաների կրթութեան գործը:

Պետութիւնը պետք է արձակի միլիոնավոր բանակներ, վորոնք յերկար տարիներով կտրում են բանվորների ծաղիկ ուժերը գութանից և դազգահից, խլում են տղամարդկանց իրենց կանանցից, ծնողներին՝ վորդիներին, փեսացվին՝ հարսնացվից, և կտրում ու խլում են միայն նրա համար, վոր այդ բանակները կապիտալիզմի պաշտպանութեան համար կոտորեն միմիանց, ավերեն գյուղեր և քաղաքներ, տարածեն ամենուրեք մահ ու վարակ, տարածեն վեներական ախտեր:

Պետութիւնը թող անի այդ բոլորը—և այն ժամանակ կվերանան վեներական ախտերը: Բայց այս կարող են անել միայն այն պետութիւնները, վորոնք իրենց կյանքը կառուցում են սոցիալիստական սկզբունքներով: Այդ սկզբունքները կազմում են մեր խորհրդային Հանրապե-



տությունների Միութեան հիմքը: Մեզ մոտ վեհերական ախտերը պակասելու յեն աստիճանաբար, մինչդեռ կապիտալիստական յերկրներում աճելու յեն առաջվա պես:

Ուրիշ կերպ ել չի կարող լինել: Վեներական հիվանդութիւնները—կապիտալիզմի ստվերն ե: Վորքան աճում ե կապիտալիզմի շենքն, այնքան ես աճում ե նրա ստվերը: Վորպեսզի վերանա ստվերը, վորպեսզի չքանան վեներական ախտերը, պետք ե կործանել հենց շենքը: Մարդկութիւնը այլասերումից ե վոչնչացումից փրկելու համար պետք կործանել կապիտալիզմը,— ե մենք տեսնում ենք վոր նա կործանվում ե:

Այն բեկումը, վորը կատարեց այդ շենքի մեջ պրոլետարական մեր մեծ հեղափոխութիւնը, չափից դուրս խորն ե, ե բուրժուական հասարակութեան շինարարները չեն կարողանա այդ շտկել:

Հիմնական այդ բեկումից առաջացել են ճեղքեր, վորոնք խախտել են կապիտալիզմի շենքը: Որեցոր այդ ճեղքերը լայնանում են, խորանում ե նորանոր ճեղքեր տալիս. մոտ ե այն ուրը, յերբ կապիտալիզմի՝ դարերի ընթացքում բարձրացրած հպարտ ամբողջ կփլչի, թողնելով իր աեղը ավերակների մի կույտ:

Այդ ավերակների տակ կկորչեն հին կյան-

քի կառուցողները: Նրանց փոխարեն կգան ե արդեն գալիս են նոր կյանքի կառուցողները, վորոնք արդեն սկսել են կառուցումը նոր կյանքի, սոցիալիզմի շենքի, վորը կանգնելու յե իսկական ազատութեան ե բոլոր մարդկանց իսկական հավասարութեան անհողողող հիմքի վրա:



**ԼԵՆԻՆՅԱՆ ԳՐԱԳՐԱՐԱՆ**

Լույս են տեսել.

Լենինի պատգամները յերիտասարգության.

**ՍՈՑ--ԲԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԲ**

Լույս են տեսել.

Ստալին.— Գյուղացիական հարց.

Ն. Ելիզարով.— Ի՞նչ վորոշեց կուսակց. XIV համադումարը:

Կլարա Յետկին. (կենսագրությունը).

**ԳՅՈՒՂԱՅԻՆԿԱՆ ԳՐԱԳՐԱՐԱՆ**

Լույս են տեսել.

Լիվինսկի.— Գյուղատնտեսական հարկ.

Ասածու կամքը թե՞ գյուղատն. գիտությունը.

Մարդկային բնակարանի պատմությունը.

Վլասով.— Հողի մշակումը յերաշտի ժամանակ.

Դմիտրյեվա.— Տղիտությունը և սնահավատությունը.

Գուզին.— Փորոց փայտից մինչև արակտոր:

Լ. Իյոպեֆովիչ.— Գեղ կանդնի գերան կկտորի (կոոպեր. մասին).

Բրանսբուրգ.— Կենդանիների վար. հիվանդութ.

Սկոմորոսով.— Լին ոգնությունը հիվանդ կենդան.

Կրավչենկո.— Թե ինչպես կարելի չե գյուղում

կերտրականութուն անցկացնել.

**ԱՌՈՂՋԱՊՈՇԻՆԿԱՆ ԳՐԱԳՐԱՐԱՆ**

Լույս են տեսել.

Սեմաշկո.— Թոքախտ.

Սպերանսկի.— Մոր այրբենարանը.

Բրոններ.— Վեներական ախտեր.

Գինսբուրգ.— Ցերեխ. վարակիչ հիվանդութ.

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՊՐՈՅԻ ԳՐԱՀԱՐԲ**

Լույս են տեսել.

Եսիպով.— Գյուղացիության պահանջները և խորհրդ. գյուղացի ծրագիրը.

« Ազգային գրադարան



NL0267692



Կրուպակայա.— Լենինի պատգ. ժող. լուս. մասին.  
Տյուրյակուևով.— Սզգային հարցը և դպրոցը.  
Ժավորոնսկով.— Հասարակադիտությունը 1 աստ.  
դպրոցում.

Կրավչենկո.— «Թե ինչպես Սաքոն կարմիր բանա-  
կային դարձավ» (մանկ.-միջին և բարձր հաս.):  
Ֆոկս.— «Մինիստր մեկ ժամով» (մանկ.-միջ. և  
բարձր հաս., պատկերազարդ):

Որլովեց.— «Ճամբորդություն սավառնակով» (ման-  
կակ., պատկերազարդ, միջ. հասակ):

Մամին-Սիբիրյակ.— «Մոծակի և արջի մասին»  
(մանկ., պատկերազարդ):

Կուպրին.— «Յերկրի խորքերում», (մանկ., պատ-  
կերազարդ, մեջ. և բարձր հասակ):

Ռուզեն.— Պոռներ, պահպանիր առողջությունդ.

Որլովեց.— Ֆիմիկոս Կուզկան. (մանկ., պատկե-  
րազարդ, միջ. և բարձր հասակ):

Նեվերով.— Ինչպես ելին ապրում տիկնիկները  
(մանկահան, պատկերազարդ).

Բ Ե Լ Լ Ե Տ Բ Ի Ս Տ Ի Կ Ը  
(Լույս են տեսել)

Մ. Գորկի.— Պատկերներ.

Ն. Սերաֆիմովիչ.— Պատկերներ.

